

1.	10.06.08	427	ԼՂՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 29-ի «ԼՂՀ պետական անտառային ֆոնդում անտառահատման ժամանակավոր կանոնները սահմանելու և անտառային ծառատեսակների հատման տարիքի սահմանման կարգը հաստատելու մասին» թիվ 489 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2.	23.12.08	935	ԼՂՀ կառավարության 2005 թ. նոյեմբերի 29-ի «ԼՂՀ պետական անտառային ֆոնդում անտառահատման ժամանակավոր կանոնները սահմանելու և անտառային ծառատեսակների հատման տարիքի սահմանման կարգը հաստատելու մասին» թիվ 489 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3.	21.06.11	422-Ն	ԼՂՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում անտառահատման ժամանակավոր կանոնները սահմանելու և անտառային ծառատեսակների հատման տարիքի սահմանման կարգը հաստատելու մասին» թիվ 489 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2005թ.

N 489

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ պետական անտառային ֆոնդում անտառահատման ժամանակավոր կանոնները սահմանելու և անտառային ծառատեսակների հատման տարիքի սահմանման կարգը հաստատելու մասին

ԼՂՀ պետական անտառային ֆոնդում գործափայտի ինքնամթերման եղանակով հատման գործընթացը կանոնակարգելու նպատակով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ԼՂՀ կառավարությունը որոշում է.

1. Հաստատել ինքնամթերման եղանակով անտառավերականգնման հատումների իրականացման և արմատի վրա անտառանյութի տրամադրման ժամանակավոր կանոնները (հավելված 1):

2. Հաստատել անտառային ծառատեսակների հատման տարիքի սահմանման կարգը (հավելված 2):

3. Սահմանել, որ մինչև արմատի վրա անտառանյութի բացթողնման կանոնները հաստատելը ԼՂՀ տարածքում գործում են ԽՍՀՄ նախարարների խորհրդի 1981թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1045 որոշմամբ հաստատված «ԽՍՀՄ անտառներում արմատի վրա փայտանյութի բացթողնման կանոնները»՝ այն մասով, որոնք չեն հակասում ԼՂՀ գործող օրենսդրությանը:

4. Ընդունել ի գիտություն, որ պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող ծառերի հատումը կարգավորվում է ԼՂՀ կառավարության 2003թ. ապրիլի 15-ի «Պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող ծառերի հատման կարգը հաստատելու մասին» թիվ 99 որոշմամբ:

5. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությանը՝

ա) մեկամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություն անտառանյութի բացթողնման գների վերաբերյալ,

բ) եռամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություն ԼՂՀ անտառների պահպանության, պաշտպանության և վերարտադրության բնագավառում օրենսդրական հիմքերի կատարելագործման ուղղությամբ:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ**Ինքնամթերման եղանակով անտառավերականգնման հատումների իրականացման և արմատի վրա անտառանյութի տրամադրման**

1. Սույն կանոններով սահմանվում է անտառօգտագործողների կողմից ինքնամթերման եղանակով անտառավերականգնման հատումների իրականացման և արմատի վրա անտառանյութի տրամադրման ժամանակավոր կարգը:

2. Անտառավերականգնման հատումները իրականացվում են հասուն և գերհասուն ծառատեսակներից կազմված անտառածածկ տարածքներում:

3. Յուրաքանչյուր հաջորդ տարվա համար հատման գծով բնափայտի մթերման նորման ԼՂՀ կառավարության կողմից հաստատվում է մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը:

4. ԼՂՀ կառավարության կողմից հաստատված բնափայտի մթերման չափաքանակները ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը բաշխվում են ըստ անտառային տնտեսությունների:

5. Անտառավերականգնման հատումների մասով հաստատված գործափայտի ծավալների սահմանում ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությունը կատարում է տվյալ տարվա հատման ենթակա ֆոնդի բաշխում անտառօգտագործողների միջև մինչև մայիսի 1-ը՝ նրանց կողմից տրված հայտերի համաձայն: Նշված ժամկետից ուշ ներկայացրած հայտերը քննարկվում են հաջորդ տարվա ֆոնդի հատկացման ընթացքում:

6. Բոլոր անտառօգտագործողները գործափայտի ինքնամթերման թույլտվությունը ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությունից ստանալուց հետո պարտավոր են 30 օրվա ընթացքում ստանալ անտառահատման տոմս: Նշված ժամկետում անտառօգտագործողի մեղքով անտառահատման տոմս չստանալու դեպքում անտառահատման թույլտվությունը համարվում է անվավեր:

7. «Արցախանտառ» ՓԲԸ-ի կողմից անտառահատման տոմսի տրման համար հիմք է հանդիսանում ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության՝ անտառօգտագործողին տրամադրած գործափայտի քանակի վերաբերյալ գրությունը և նշված քանակի համար անհրաժեշտ մուծումների ամբողջությամբ կատարումը հաստատող փաստաթուղթը (մուծման անդորրագիրը):

8. Անտառօգտագործողների կողմից անտառանյութի մթերումը և տեղափոխումը կատարվում է համաձայն անտառահատման տոմսի տարվա ընթացքում և ավարտվում դեկտեմբերի 31-ին:

9. Անտառանյութի մթերման կամ տեղափոխման ժամկետները առանձին դեպքերում ԼՂՀ գյուղատնտեսության նախարարի թույլտվությամբ կարող են երկարաձգվել առավելագույնը 6 ամիս ժամկետով, անտառօգտագործողից գանձելով տույժ՝ չտեղափոխված (չմթերված) անտառանյութի արժեքի 3 տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր ամսվա համար:

10. Արմատի վրա գործափայտի մթերման համար անտառօգտագործման իրավունք կարող են ստանալ յուրաքանչյուր ծառատեսակից 20 մ³-ից ավել հայտ ներկայացնողները:

11. Անտառօգտագործողի կողմից անտառահատման տոմսում նշված ժամկետում (ներառյալ երկարաձգման ժամկետը) չհատված կամ չտեղափոխված անտառանյութը առգրավվում է անտառային տնտեսության կողմից ու դրա դիմաց փոխհատուցում չի կատարվում, իսկ գանձված գումարները չեն վերադարձվում:

12. Պետական անտառային ֆոնդում անտառատնտեսական պահանջների խախտում թույլ տված անտառօգտագործողները ենթարկվում են պատասխանատվության՝ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կ Ա Ր Գ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ ՏԱՐԻՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
 - *աստիճանական հատումներ*՝ անտառավերականգնման հատումների տեսակ, որը կատարվում է մի քանի փուլով.
 - *գերհասուն ծառուտ*՝ անտառի հասակային վիճակ, որը հաջորդում է ծառուտի հասուն փուլին, բնորոշվում է վերին շարահարկում ծառերի թույլ աճով.
 - *ծառուտի բացասական աճի փուլ*՝ այն տարիքն է, երբ տվյալ ծառուտում ծառերի տարեկան միջին աճը չի փոխհատուցում մահացող ծառերի բնափայտի ծավալը.
 - *հասուն ծառուտ*՝ ծառուտի հասակային խումբ, որը նախորդում է գերհասուն հասակին, դանդաղում է ծառերի տարբերակումը, գազաթային աճը, թուլանում է բնի ընդլայնական աճը:
2. Անտառային ծառատեսակների հատման տարիքը որոշվում է՝ սկսած այն հասակային դասից, երբ ծառերը (ծառուտը) սկսում են աստիճանաբար կորցնել իրենց կայունությունը և արտադրողականությունը, երբ տվյալ ծառուտում ծառերի միջին աճը չի փոխհատուցում ծառերի բնափայտի ծավալը:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անտառային ծառատեսակների հատման տարիքը սահմանվում է անտառավերականգնման հատումներ իրականացնելու համար:

II. ԱՆՏԱՌԱՅԻՆ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱՐԻՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառներում անտառավերականգնման հատումներն իրականացվում են աստիճանական և ընտրովի հատումների ձևով, որտեղ հատման տարիքը որոշելիս հաշվի են առնվում ծառուտի հասակային խմբերն ու դասերը:
5. Աստիճանական հատումները լինում են հավասարաչափ, խմբակային-ընտրովի և երկարատև:
 - Հավասարաչափ հատումներն իրականացվում են այն ծառուտներում, որտեղ առկա է նոսրացման անհրաժեշտություն:
 - Խմբակային-ընտրովի հատումների ժամանակ ծառուտը հատվում է մի քանի փուլով՝ խմբերով, հասակային մեկ դասի ժամանակահատվածում, որտեղ առկա է մատղաշի անհրաժեշտ քանակություն:
 - Երկարատև հատումներն իրականացվում են տարահասակ ծառուտներում՝ 2 փուլով: Առաջին և երկրորդ հատումների ժամանակ թողնվում են այն ծառերը, որոնք դեռևս չեն հասունացել: Նման ծառուտներում հատումները վերահսկվում են 30-40 տարի հետո, երբ ծառերը հասնում են շահագործման տարիքի:
6. Ընտրովի հատումներն իրականացվում են տարահասակ, հասուն և գերհասուն անտառներում, հատվում են հասուն և գերհասուն, ինչպես նաև հիվանդություններով և վնասատուներով վարակված ծառերը:
7. Անտառային ծառատեսակների հատման տարիքը որոշվում է՝ սկսած այն հասակից, երբ ծառուտն աստիճանաբար կորցնում է իր կայունության և արտադրողականության ցուցանիշները, իսկ ծառերն անցնում են բացասական աճի փուլ:

Անտառային ծառատեսակների հատման առավելագույն սահմանային տարիքի և ծառուտի բացասական աճն սկսելու միջև ընկած ժամանակահատվածը 20-40 տարի է, որի ընթացքում երաշխավորվում է ծառերի հատումը:

Հասուն և գերհասուն անտառային ծառատեսակների հատման տարիքը ներկայացված է աղյուսակում.

Գերակշռող ծառերը	Տարիքը	Հասակային դասը
Սոճի	121-140	VII
Կաղնի (սերմնային)	141-160	VIII
Կաղնի (բնաշվային)	101-120	VI
Հաճար	141-160	VIII
Բոխի (սերմնային)	101-120	VI
Բոխի (բնաշվային)	71-80	VIII
Ղաժի (սերմնային)	101-120	VI
Ղաժի (բնաշվային)	61-70	VII
Հացենի	121-140	VII
Թխկի	121-140	VII
Թեղի	121-140	VII
Խնձորենի	51-60	VI
Տանձենի	101-120	VI
Ընկուզենի	141-160	VIII
Կեչի	61-70	VII
Լորենի	91-100	X
Ուռի	51-60	VI
Թթենի	101-120	VI
Կենի	101-120	VI
Շագանակենի	101-120	VI
Ակացիա	16-20	VI
Փոշնի	101-120	VI

ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Ս. Գրիգորյան